ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2022 թվականի թիվ 338–Ա

ԳԱՅԱՆԵ ԳԱՐԵԳՆԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲԻ Ջ. ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի Ջ. Ղարախանյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 5 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Գ.Ավագյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

Գայանե Գարեգնի Ավագյանին 2022 թվականի նոյեմբերի 29-ից նշանակել <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբի Ջ. Ղարախանյանի թիվ 1 միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

29.11.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ